

ՖԻԼԻՓԵԱՆ ԿԳՁԻՆԵՐՈՒՆ ՄԷՁ ԱԻԵԼԻ ՔԱՆ 500 ՆՈՐ ԿԳՁԻՆԵՐ 3ԱՅՏՆԱՔԵՐՈՒՄԸ ԵՆ

Ֆիլիպեան կղզիներու ազգային քարտեսագրական վարչութիւնը 21 հոկտեմբերին հրապարակած է տուեալներ, որոնց համաձայն, պետութեան կազմին մէջ 500 աւելի կղզիներ կան մինչեւ օրս: Այս մասին կը հաղորդէ «Տօչէ Վելլէ»:

Վերջին տուեալներով՝ Ֆիլիպեան կղզիներուն թիւը կը հասնէր 7641-ի: 1945 թուականի տուեալներով՝ կղզիներուն թիւը 7017 էր:

Կը հաղորդուի, որ Նոր կղզիները կը բացայայտուին Նորագոյն գործելակերպի շնորհիւ. հաշուարկը կատարուած է կատարելագործուած **ռատարի** միջոցով:

Ֆիլիպեան կղզիներու կառավարութիւնը առաւել զարգացած գործելակերպը սկսած է գործարկել 2013 թուականէն սկսեալ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԿՐ 3ԱՅՏՆԷ ԼԻՔԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒՆ՝ ՇԵՇՏԵԼՈՎ ԽԱՂԱՂ ՑՈՅՑԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՓԱԿ ՊԱՀԵԼ ԻՐԵՆՑ ԴՈՆԵՐԸ

Հակառակ նախորդ հինգ օրերուն ընթացքին Լիբանանի զանազան շրջաններուն մէջ տիրող կացութեան եւ առաւօտեան կանուխ ժամերէն լիբանանցի քաղաքացիներուն բազմութիւններուն կողմէ Պեյրութի, Թրիփոլիի, Չուքի, Ժալ Էլ Տիպի, Շէրուէի եւ Սուրի հրապարակներն ու մայրուղիները ողողելու երեսոյթին, երէկ՝ ժողովրդային պոռթկումի վեցերորդ օրուան ընթացքին, շարժումը աւելի դանդաղ քայլերով ընթացաւ՝ իր գագաթնակէտին հասնելով երեկոյեան:

Առաւօտեան կանուխ ժամերուն ընթացքին շատ աւելի աշխուժ ընթացան փողոցները փակելու քայլերը, որոնց իբրեւ հետեանք երթելէկի լուրջ հարցեր ստեղծուեցան քաղաքացիներուն դիմաց:

Սակայն յետմիջօրեին Կեդրոնական Պեյրութի զոյգ հրապարակները՝ Նահատակացոյ ու Ռիատ Սոլիք, Թրիփոլիի Նուր հրապարակը, Սուրի Ալամ հրապարակը, ինչպէս նաեւ Ժալ Էլ Տիպի եւ Չուքի մայրուղիները ողողուեցան լիբանանցի քաղաքացիներով, որոնք ամբողջ գիշեր փողոցը մնացին եւ լիբանանեան դրօշակը բարձրացնելով դարձեալ կրկնեցին իրենց պահանջները՝ պահանջելով իշխանութեան հրաժարականը:

Բայց եւ այնպէս այս լուրջ պահանջին առընթեր անոնք անցուցին նաեւ այլ ճոխ գիշեր մը՝ երգով ու պարով լեցուն:

Ալկերեւ եր նաեւ այն իրականութիւնը, որ երէկ խումբ մը արուեստագետներ ներխուժեցին



Լիբանանի պետական պատկերասփիւռի կայան եւ մեդիորեցին զայն ժողովրդային շարժումը չսփռելու յանցանքով:

Անոնք հաստատեցին, որ այդ կայանը ժողովուրդին կայանն է եւ անոր արդար պահանջները արտացոլացնող հայելին պէտք է դառնայ:

Մինչ ցուցարարները այս մթնոլորտով կը շարունակէին կառչած մնալ իրենց պահանջներուն, լիբանանեան բանակի զաղտնի սպասարկուիւնը երէկ ձերբակալեց լիբանանցի ու պաղեստինցի տասնեակ երիտասարդներ, որոնք յարձակած էին Սուրի հանգստարանին վրայ եւ հրկիզած զայն:

Լիբանանեան բանակը գիշերուան ժամը

11:00-ին յաջողեցաւ վերաբանալ Պեյրութի միջազգային օդակայան տանող մայրուղին՝ երկու ուղղութեամբ, ինչպէս նաեւ Չահրանի-Սայտա-Սուր-Ղազիէ եւ Պուարի մայրուղիները:

Նշենք, որ երեկոյեան ժամը 9:00-ին հանրապետութեան նախագահի գոր. Միշել Աուն եւ վարչապետ Սաատ Յարիրի հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցած էին բանակի հրամանատար գոր. Ժոզեֆ Աունի հետ եւ անկէ պահանջած, որ բանակը վերաբանալ ճամբաները՝ դիւրացնելու համար քաղաքացիներուն երթելէ կը:

Շար.ը՝ էջ 2

«ՏԱԿԱԻՆ ԿԱՆՈՒԽ Է ԵԶՐԱԿԱՅՆԵԼ, ԹԷ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՓՈՂՈՑՆԵՐԷՆ ԿՐ ՀԵՌԱՆԱՅ»

ՇԵՇՏԵՑ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի «Սփութիք» Արմենիա»-ի հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին անդրադարձաւ. Լիբանանի մէջ բռնկած բողոքի ցոյցերուն եւ ժողովրդային շարժումին:

Ան նշեց, որ բնականաբար անցնող վեց օրերուն ընթացքին ժողովրդային այս պոռթկումը իր գագաթնակէտին հասած է, տարիներու կուտակումի հետեանք է:

«Անիկա արդար պոռթկում է ժողովուրդի պահանջներուն նկատմամբ ցուցաբերուած անտարբերութեան, գողութեան, փտածութեան, ընկերային կացութեան հանդէպ ցուցաբերուած անարդար եւ ոչ գոհացուցիչ որոշումներուն պատճառով», ըսաւ ան:

Երեսփոխան Բագրատունիի հաստատեց, որ այսօր ժողովուրդը կը պոռթկայ եւ ամէն տեսակի հեղինակութիւն կը մերժէ՝ սկսելով հանրապետութեան նախագահէն մինչեւ խորհրդարանի նախագահի, վարչապետ, նախարարաց խորհուրդ եւ երեսփոխաններ: «Այսօրուան երեսոյթը այն է, որ թէեւ այդ ցոյցերուն կը մասնակցին երկրին բաղկացուցիչ տարբեր համայնքներէ եւ տարբեր կուսակցութիւններէ անհատներ, սակայն բոլորն ալ միացած են լիբանանեան դրօշին ներքեւ: Անշուշտ այս երեսոյթը միայն ժողովրդային ցասումի առումով պէտք չէ քննել, որովհետեւ կան տեղական, շրջանային եւ միջազգային քաղաքական որոշ տուեալներ, որոնք այս պարագային նոյնացած են եւ ունեցած փողոցին մէջ դրսեւորուած իրենց արտայայտութիւնը», ըսաւ ան:

Շար.ը՝ էջ 3

ԸՍՏ ԹՈՐԸ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՍՈՒՄԸ ԷՐՏՈՂԱՆ-ՓՈՒԹԻՆ «ԱՐԴԻՆԱԻՏ» ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԳՈՅԱՅԱԾ Է «ՀՈՅԱԿԱՊ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան երէկ Սոչիի մէջ երկարատեւ հանդիպում մը ունեցաւ իր ռուս պաշտօնակից Վլատիմիր Փութինի հետ՝ ծրագրելու համար Թուրքիոյ հետ Սուրիոյ սահմանին վրայ զինուորական ռազմավարութիւնը:

Էրտողան անցեալ շաբաթ յայտարարուած 120 ժամուան զինադադարէն ժամեր առաջ յայտարարեց, որ պիտի վերսկսի քիւրտ զինեալներուն դէմ իր զինուորական գործողութեան, եթէ անոնք չհեռանան շրջանէն:

Ան յայտնեց, որ շուրջ 800 քիւրտ զին-



եալներ հեռացած են սահմանային շրջանէն, սակայն շուրջ 1300 ուրիշներ այդտեղ կը մնան:

Շար.ը՝ էջ 3

ԱՆԱԿԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍԸ ՏԱԼՈՎ ԻՏԼԻՊԻ ԳԻՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԾԱԿԱՏ

ԱՄԱՏ. «ԷՐՏՈՂԱՆԸ ԳՈՂ Է, ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ, ՅՈՐԵՆՆ ՈՒ ՔԱՐԻԻՂԸ ԳՈՂՅԱԻ, ԵՒ ԱՅԺՄ ԿՈՒԶԷ ՀՈՂԸ ԳՈՂՆԱԼ»

Սուրիական ՍԱՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ անակնկալ այցելութիւն մը տուած է Իտլիպի գիւղական շրջանին մէջ գտնուող ճակատի առաջին գիծ:

Ասատ իր այցելութեան ընթացքին Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանը կոչած է «գող, ան գործարանները, ցորենն ու քարիւղը գողցաւ... եւ այսօր կը գողնայ հողը»:



Շար.ը՝ էջ 3

ՆԱԽԱՐԱՐ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՁ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ Է ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄՆԱՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՀԵՏ



Լոնտոն գտնուելուն ընթացքին Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Չոհրապ Մսացականեան հանդիպում ունեցաւ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութեան մնայուն քարտուղար Սայմըն Մըքտոնըլտի հետ:

Շար.ը՝ էջ 3

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ՄԵՆՔ ԿՐ ՏԵՄՆԵՐՔ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՃԸ, ՊԷՏՔ Է ԲՈԼՈՐՍ ՄԵԱՌՈՐՈՒՆՔ»



«168 Թի. Վի.»-ի «Ռեփուս» հաղորդաշարին հիւրը՝ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի անդամ Արթուր Խաչատրեան հարցազրոյցին ընթացքին խօսեցաւ հայաստանեան ներքին խնդիրներու մասին, ինչպէս նաեւ Ազըրպէյճանի սպառնազինութեան մասին:

Շար.ը՝ էջ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՃԱՓՈՒՑ ՄԷՁ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ ԵՐԿՐԻ ԿԱՅՍՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեան իր կնոջ՝ Նունե Սարգսեանի հետ Ճափոնի կառավարութեան հրաւերով Թոքիոյ մէջ Ներկայ գտնուեցաւ Ճափոնի Նոր կայսեր՝ Նարուհիթոյի զահակալութեան հանդիսաւոր տօնակատարութեան, կը հաղորդէ Հայաստանի Հանրապետութեան նախագահի մամլոյ ծառայութիւնը:

Շար.ը՝ էջ 3

ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԱՐՅԱԽԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԶԻՆՈՒՄԸ ՈՒԺԵՐՈՒ ՇՓՄԱՆ ԳԻԾԻՆ ՄԷՁ ԱՆՅԱԾ Է ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԻ



Երէկ ԵԱՀԿ-ի առաքելութիւնը զինադադարի դրութեան ծրագրային դիտարկում կազմակերպած է Արցախի եւ Ազրպէյճանի զինուած ուժերու շփման գիծին մէջ՝ Ակնայէն հարաւ-արեւելք հատուածին մէջ:

Շար.ը՝ էջ 3

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ . . .

Շարունակում Ա. Էջեն

Փուռերու սեփականատերերու սենտիքան իր կարգին կոչ ուղղեց բանակին, որ Պեյրուքի Նաւահանգիստէն ցորենի փոխադրութիւնը ապահովէ ալրաղացներուն եւ ապա ալիւրը՝ փուռերուն: Սենտիքան նկատել տուաւ, որ այս փոխադրութեան չապահովուելուն պարագային, լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ հացի տաճնապ պիտի սկսի:

Միւս կողմէ, Դրամատուներու միութիւնը դարձեալ հաստատեց, որ դրամատուները այսօր եւս իրենց դռները փակ պիտի պահեն: Իսկ կրթութեան եւ բարձրագոյն ուսման Նախարար Աքրամ Շե-

Կը Նախատեսուի, որ կառավարութիւնը վաղը՝ հինգշաբթի, 24 հոկտեմբերին զումարէ Նիստ մը՝ արագացնելու համար բարեկարգումներու գործադրութիւնը:

Նիստին վայրը տակաւին չէ ճշդուած: Զարիթի վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Զուլայի դեսպան Ապտէ Ալ Զանային՝ Ներկայութեամբ Բարգաւաճման եւ վերակառուցումի խորհուրդի Նախագահ Նեպիլ ժըրի: Զանդիպումէն ետք Զանայի բաւարարուեցաւ յայտարարելով, որ Ներկայիս գործելու ժամանակն է եւ ոչ թէ խօսելու: Վարչապետ Զարիթիի այցելուներէն Եղաւ Նաեւ դեսպան Ֆուշէ,

Ժմպլաթ դժգոհութիւն յայտնեց, որ հանրապետութեան Նախագահ զօր. Միշել Աուն լուռ է եւ անոր փոխարէն խօսողը արտաքին գործոց Նախարարն է, որ երկիրը քանդած է:

Խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի յայտնեց, որ կառավարութեան մշակած տնտեսական բարեկարգումի թղթածրարը կարող է Լիբանանը ճիշդ հունին վրայ գետեղել:

Ազգային երկխօսութիւն կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ֆուատ Մահպումի կոչ ուղղեց կառավարութեան անմիջական հրա-



հայեալ յայտարարեց, որ Լիբանանի տարածքին գտնուող բոլոր դպրոցները ցնոր տնօրինում փակ պիտի մնան:

Այս շրջագիծին մէջ, պետք է անդրադառնալ, որ մեծ թիւով ցուցարարներ երէկ բողոքի ցոյց մը կատարեցին Կեդրոնական դրամատան դիմաց, ինչպէս նաեւ կոչ ուղղեցին այսօր բողոքի ցոյց մը կազմակերպելու կրթութեան Նախարարութեան դիմաց՝ պահանջելու համար Նախարար Շեհայէի հրաժարականը:

Լիբանանեան համալսարանի Նախագահ Ֆուատ Այուպ երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, որ Նկատի ունենալով ուսանողներուն ապահովութիւնը, համալսարանը կը շարունակէ դասադուլը՝ աւելցնելով սակայն, որ համալսարանը իր բոլոր բաժանմունքներուն դռները պիտի վերաբանայ՝ կատարելու համար վարչական աշխատանքները:

Վարչապետ Սաատ Զարիթի երէկ վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանի օժանդակ երկիրներու դեսպանները, որոնց շարքին՝ Միացեալ Նահանգներու դեսպան Էլիզապեթ Ռիչըրտ, Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Չասիքիին, Ֆրանսայի դեսպան Պրուսո Ֆուշէ, Բրիտանիոյ դեսպան Զրիս Ռամպլին, Գերմանիոյ դեսպան Պըրկլին, Իտալիոյ դեսպան Մասիմո Մարոթթի, Եւրոպական Միութեան դեսպան Ռալֆ Թրաֆ, Չինաստանի դեսպանատան գործակատար

որ վարչապետին հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները՝ ներկայութեամբ Նախկին Նախարար Ղաթթաս Խուրիի:

Լիբանանի մէջ ֆրանսական դեսպանատունը երէկ երեկոյեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ Նշուեցաւ, որ Փարիզ կը քաջալերէ Լիբանանի կառավարութիւնը՝ գործադրելու համար անհրաժեշտ բարեկարգումները, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղէ պահպանելու բողոքի ցոյցերուն խաղաղ բնոյթը եւ յարգելու բողոքի ցոյց կատարելու լիբանանցիներուն իրաւունքը:

Զաղորդագրութեան մէջ շեշտուեցաւ, որ Ֆրանսա կը շարունակէ զօրակցիլ Լիբանանին՝ ընդգծելով, որ Փարիզ յանձնառու կը մնայ գործադրելու «Սետր»-ի խորհրդածողովին որոշումները՝ միջազգային իր գործակիցներուն հետ միասնաբար:

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռապիտ Ժմպլաթ երէկ կէս գիշերին կատարեց յայտարարութիւն մը՝ ըսելով, որ կառավարութեան հրաժարականը կրնայ անհակաշնչի հետեւանքներ ունենալ՝ աւելցնելով, որ իրենք պիտի շարունակեն Նախարարաց խորհուրդին ընդմէջէն բարեկարգումներ կատարել:

Ան Նշեց, որ երկրին վարչակարգը կարելի է տապալել երեսփոխանական ընտրութիւններուն ընդմէջէն՝ աւելցնելով, որ ատիկա կը կատարուի երեսփոխանական Նոր ընտրութիւններէն ետք կազմուելիք կառավարական կազմով:

Ժմպլաթ յայտնեց, որ Ընկերվար յառաջդիմական կուսակցութիւնը կը մերժէ պետական մարզի վաճառքն ու սեփականաշնորհումի քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղէ վարչապետ Զարիթիին վերատեսութեան ենթարկելու այդ ըստը:



Ճիւսկ Զուլհանկ, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական Ներկայացուցիչ Իւան Զուպիչ, Արաբական լիկայի Ներկայացուցիչ Ապտէ Ռահման Սոլի եւ Նախկին Նախարար Ղաթթաս Խուրի:

Զանդիպումէն ետք Զուպիչ յայտնեց, որ վարչապետ Զարիթի Ներկայացուցած է այն լուրջ բարեկարգումները, որոնք որդեգրուած են կառավարութեան կողմէ, ըլլան անոնք 2020-ի պետական ամալարկին մէջ Ներառուած բարեկարգումները, որոնք սահմանադրութեամբ ճշդուած ժամկետին մէջ են, ինչպէս նաեւ ամալարկին զուգահեռ որդեգրուած բարեկարգումները:

Ան նկատել տուաւ, թէ Զարիթի որդունած է ցոյցերը՝ հաստատելով, որ լիբանանցի երիտասարդներուն արդար եւ հզօր պոռթկումին շնորհիւ է, որ կառավարութիւնը վաւերացուցած է բարեկարգումներու այդ ծրագիրը, ինչպէս նաեւ հաստատեց, որ բարեկարգումի որոշումները չեն տրուած այն պայմանով, որ ցոյցերը դադրին:

Զուպիչ ընդգծեց նաեւ, որ ոչ ոքի արտօնուած է սպառնալ ցուցարարներուն՝ աւելցնելով, որ լիբանանեան պետութեան պարտականութիւնն է պաշտպանել խաղաղ ցուցարարները:

Զուպիչ Նշեց, որ իրենք կը զօրակցին կառավարութեան որդեգրած բարեկարգումներուն եւ անոնց հետապնդած Նպատակներուն: Ան աւելցուց նաեւ, որ Լիբանանի օժանդակ երկիրները կոչ կ'ուղղեն երկրին պետութեան եւ քաղաքական տարբեր ուժերուն անսալու ժողովուրդին արդար պահանջներուն եւ աշխատելու անոր հետ, որ պէտքի կարելի ըլլալ հարցերուն լուծումներ գտնել:

Ան բարձր գնահատեց անցեալ շաբաթ օրուընէ սկսեալ տեղի ունեցող խաղաղ ցոյցերը, ինչպէս նաեւ լիբանանեան բանակին եւ Ներքին ապահովութեան ուժերուն կողմէ ցուցարարներուն պաշտպանութեան ապահովումը:

Բարեկարգումներու յատուկ Նախարարական յանձնախումբը այսօր կէսօրէ ետք ժամը 1:30-ին, վարչապետարանին մէջ պիտի գումարէ իր նիստը, որուն ընթացքին պիտի քննարկուին փութածութեան դժ պայքարելու օրէնքի մշակումը եւ իւրացուած գումարները վերադարձնելու թղթածրարը:



Ժարականին՝ Նախքան երկրին ամբողջութեամբ քաոսի մատուլիլը: Ան շեշտեց, որ Ժողովուրդին մէջ անիշխանութեան մատուլու երկիւղի տարածումը մերժելի է:

Նախկին վարչապետ Նեժիպ Միքթաթի վերստին հրաժարելու կոչ ուղղեց կառավարութեան: Ան հաստատեց, որ ինք իր պաշտօնը անձնական շահեր ապահովելու համար բնաւ չէ քարաշահած:

Լիբանանեան ուժեր կուսակցութեան տեղեկատու գրասենակը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ Նշուեցաւ, որ Ներկայիս օգտակար միակ քայլը կառավարութեան հրաժարականն է:

Նոյն հաղորդագրութեան մէջ կոչ ուղղուեցաւ կազմելու չեզոք փորձագետներու կառավարութիւն մը, որ Նախարարաց խորհուրդը կազմող Ներկայ քաղաքական ուժերուն վերամասնութենէն հեռու է՝ աւելցնելով, որ միայն նման կազմ մը կրնայ փրկել Լիբանանը:

Փաղանգաւոր կուսակցութեան ուսանողական-երիտասարդական թեւը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ կոչ ուղղեց մնալու պայքարի հրապարակներուն վրայ եւ անտեսելու իշխանութիւններուն պահանջները:

Զաղորդագրութեան մէջ կոչ ուղղուեցաւ Ներկայ կառավարութեան հրաժարականին, մասնագետներու կառավարութեան կազմութեան եւ երեսփոխանական կանխահաս ընտրութիւններու կազմակերպումին:

Զանրապետութեան Նախկին Նախագահ Ամին Ժմայել երէկ այցելեց Պէրքէ, ուր հանդիպում մը ունեցաւ մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքին հետ:

Զանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւններն ու լիբանանցի ժողովուրդին անսախընթաց ցասումն ու պոռթկումը, որ կը դրսեւորուի փողոցներուն մէջ՝ շուրջ մէկ շաբաթէ ի վեր:

Ժմայել անհրաժեշտ նկատեց անսալ ժողովուրդային շարժումին ու անոր պահանջներուն եւ գոհացում տալ շարժումին արդար պահանջներուն, որպէսզի կարելի ըլլալ նաեւ փրկել երկրին անկախութիւնն ու գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ վերահաստատել պատասխանատուներուն հանդէպ ժողովուրդին վստահութիւնը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԿԱՐԳ ՄԸ ԱԿՈՒՄԲՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԻՐԵՆՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Հակառակ անոր որ Լիբանանի մէջ հակակառավարական ժողովրդային ցոյցերը կը շարունակուին, սակայն լիբանանեան ֆութպոլի կարգ մը ակումբներ իրենց սովորական փորձերը կը շարունակեն տարբեր դաշտերու վրայ:

Ռասիկէ այն միակ ակումբն է, որ ցարդ իր փորձերը կը շարունակէ կատարել Շիահի մարզադաշտին վրայ:

Այդ փորձերէն կը բացակային միայն քանի մը ֆութպոլիստներ, որոնք կը գտնուին հարաւային Լիբանան եւ խումբին միանալու դժուարութիւններ ունին՝ ճամբաներուն փակ ըլլալուն պատճառով:

Իր փորձերուն սկսաւ Նաեւ Նըժմէ, Մանարայի իր դաշտին վրայ՝ մասնակցութեամբ ակումբին մարզիկներուն մեծամասնութեան:

Շար.ը՝ էջ 10

ՄԱՆՉԻՆԻ ՉԻ ԲԱՅԱՌԵՐ ՊԻԻՖՈՆԻ ԵՒ ՏԷ ՌՈՍՍԻԻ՝ ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Իտալիոյ ֆութպոլի ազգային խումբի մարզիչ Ռոպերթո Մանչինի չի բացառեր Եովէնթուսի բերդապահ Ճիան Լուիճի Պիֆոնի եւ Պոքա ժուկիորգի միջնապահ Տանիէլէ Տէ Ռոսսիի հաւանական մասնակցութիւնը Եւրո-2020-ի ֆութպոլի ախոյեանութեան աւարտական հանգրժանի մրցումներուն:




«Մենք կ'ուզենք Իտալիոյ ֆութպոլի ազգային խումբը վերադարձնել այն դիրքին, որուն անկկա արժանի է: Աշխարհի ախոյեան հանդիսացած ենք 4 անգամ, բայց երկար ժամանակէ ի վեր չենք տիրացած Եւրոպայի ֆութպոլի ախոյեանութեան: Հետեւաբար, այս տիտղոսին տիրանալը այժմ մեր գլխաւոր նպատակներէն մէկն է», յայտարարեց Մանչինի՝ իտալական մարզական թերթերուն հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին:

Ան եզրափակեց նշելով, որ վերոնշեալ երկու փորձառու մարզիկներուն հետ կը յուսայ հանդիսանալ Եւրոպայի ախոյեան:

«ՖՐԱՆՍ ՖՈՒԹՊՈԼ»-Ի 2019-Ի ՄՐՑԱՆԱԿ

ՅԱՏԱԿԱՅԱՆ 10 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ



Իւրաքանչիւր տարի Ֆրանսական հանրածանօթ «Փրանս ֆութպոլ» մարզաթերթը կ'ընտրէ տարուան լաւագոյն ֆութպոլիստը («Պալոն Տ'որ»):

2019-ին այդ տիտղոսին համար պայքարը պիտի ընթանայ հետեւեալ ֆութպոլիստներուն միջեւ.

Շար.ը՝ էջ 10

ԹՈՒՐԲ ԲԵՐԴԱՊԱՎՔԸ ՄՈՈՑԱՃ ԷՐ, ՈՐ ՄԵԾ ՔԱՌԱԿՈՒՄԻԵՆ ԴՈՒՐՍ ԳՆԴԱԿԻՆ ՉԵՈՔՈՎ ՉԻ ԿՐՆԱՐ ԴՊՉԻԼ



Թուրքիոյ ֆութպոլի ախոյեանութեան Զոնիասփոր - Մալաթիասփոր մրցումին, ծիծաղելի դէպք մը պատահած է հիւրընկալ կազմին բերդապահին կողմէ:

Մրցումին սկսելէն 11 երկվայրկեան ետք, Զոնիասփորի բերդապահ Սերճան Քիւթիլա դէպի իրեն ուղղուող գնդակին կողմը վազելով պահ մը կարծած է, որ ամբողջ դաշտին վրայ իրաւունք ունի գնդակին դպչիլ, ձեռքով հեռացուցած է գնդակը մեծ քառակուսիէն դուրս:

Իրաւարարը «ուշիմ» բերդապահին մօտենալով ուղղակիօրէն կարմիր քարտ մը ցոյց տուած է անոր:

ՃԱՏՐԱԿ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԲԱՅԱՌՈՒԿ ԱՐԴԻՒՆՔԸ՝ ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՄԷՋ

Փորթուգալի մէջ աւարտեցաւ ճատրակի միջազգային մրցաշարք մը, որ կը կրէր «Սելա» անունը:

Այս մրցաշարքին Հայաստանէն իր մասնակցութիւնը բերաւ **Կրանտ մասթըր** Կարեն Գրիգորեան:

Ան բացառիկ արդիւնք արձանագրելով տիրացաւ այս մրցաշարքի տիտղոսին: Գրիգորեան առաւելագոյն 8 կէտէն ապահովեց Նոյնքան կէտ:

Այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին 7 երկիրներէ եկած 41 ճատրակ խաղացողներ:



Վերջին շրջանին Գրիգորեան Փորթուգալի մէջ երկու այլ տիտղոսներու

եւ տիրացած էր՝ արձանագրելով փայլուն արդիւնքներ:

ՃԱՏՐԱԿ. «ԿՐԱՆՏ ՍՈՒՒՍ»-Ի ՄՐՑԱՇԱՐՔ

ՄԱԿՆԻՒՄ ՔԱՐԼՍԸՆ ՄՐՑԱՆԻՇ ՄԸ ՀԱՍՏԱՏԵՑ

Ինչպէս ծանօթ է, Նախանցեալ օր աւարտեցաւ ՖԻՏԵ-ի «Կրանտ Սուս» ճատրակի միջազգային մրցաշարքը, երբ կատարուեցան 11-րդ եւ վերջին հանգըրանի հանդիպումները:

Հայկական ճատրակի յառաջատար Լեւոն Արուսեան վերջին հանգրուանին հաւասարութիւն մը արձանագրեց աշխարհի Նորվեկիացի ախոյեան Մակնիւս Զարուք-Լի հետ:

Կազմակերպութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ իր արձանագրած այս հաւասարութեան շնորհիւ Զարուքն դասական ճատրակին մէջ իր անպարտելիութեան շարքը հասցնելով 101-ի աշխարհի մրցանիշ մը հաստատեց:



Մակնիւս Զարուքն

Շար.ը՝ էջ 10

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ԹՈՐՈՂԹՈ ՌԵՓՈՐԹ - ՆԻՒ ՕՐԼԻՆՉ ՄՐՑՈՒՄՈՎ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ 2019-2020 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

«ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի պասքեթպոլի ախոյեանութեան 2019-2020 տարեշրջանին ազդանշանը կը տրուի այսօր, երբ կը կատարուին բացման երկու մրցումներ:

Նախորդ տարեշրջանի ախոյեան Թորոնթօ Ռեփթըրգի դաշտէն կը սկսի Նոր տարեշրջանը: Անկկա կը հիւրընկալէ Նիւ Օրլինզը:

Այս մրցումին կը յաջորդէ Լոս Անճելըս քաղաքի տերպին՝ Քլիփըրգի եւ Լէյքըրգի միջեւ, առաջինին դաշտին վրայ:

Վաղը տեղի կ'ունենան 11 ճակատումներ:



«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ԱՐՎԻՏԱՍ ՄԱՊՈՐԻ ԶԱՒԱԿԸ ԿՆՔԵՅ 77 ՄԵԼԻՈՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Պասքեթպոլի լիթուանացի Նախկին անուանի աստղերէն Արվիտաս Սապոնիսի գաւակը՝ 23 տարեկան Տոմասթաս Սապոնիս Նոր պայմանագրութիւն մը կնքեց «ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի կազմէն Ինտիանա Փէյսըրգի հետ, յայտնեց «Ի. Էս. Փի. Էս.»: Տոմասթաս փոխան 77 միլիոն ամերիկեան տոլարի կնքեց չորս տարուան համաձայնագիր մը:

Ան «ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի հետ իր արիեստավարժ ասպարեզին սկսաւ 2016-ին՝ Օքլահոմա Սիթիի հետ: Ան 2017-ԷՆ ի վեր ելոյթ կ'ունենայ Փէյսըրգի հետ:

Նախորդ տարեշրջանին ան իւրաքանչիւր մրցումի ընթացքին միջին հաշուով նշանակեց 14,1 կէտ:



ԻՆՏԻՓԵՆՏՐՆԹ. «ՄԵՍՍԻ՝ 21-ՐԴ ԴԱՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԸ»

Անգլիական «Ինտիփենտընթ» օրաթերթը ներկայացուց 21-րդ դարու լաւագոյն 100 ֆութպոլիստներուն ցանկը, որ կը գլխաւորէ Արժանթինի ֆութպոլի ազգային խումբի եւ քաթալոնական Պարսելոնա-յի յառաջապահ Լիոնել Մեսսի:

Երկրորդ դիրքին վրայ կը գտնուի Փորթուգալի ֆութպոլի ազգային խումբի եւ Եովէնթուսի յառաջապահ Քրիսթիանօ Ռոնալտօ:

Իսկ լաւագոյն եռեակը կ'ամբողջացնէ Սպանիոյ ֆութպոլի ազգային խումբի եւ Պարսելոնայի Նախկին ֆութպոլիստ Զաւի Հեռնանտես:



«ՉԵՄՓԻԸՆՉ-ԼԻԿ»

- ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ՅԱՂԹԱԿԱՆ՝ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ - ՏԻՊԱԼԱ ԿԵՐՏԵՅ ԵՈՒՎԵՆԹՈՒՄԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Երէկ գիշեր «Չեմփիընզ լիկ»-ի ֆութպոլի մրցաշարքին ծիրին մէջ կատարուեցան ութ ճակատումներ՝ չորս խմբակներու մէջ:

Ա. խմբակին մէջ, մինչ Փարիզ Սեն Շերմեն արձանագրեց իր յաջորդական երրորդ յաղթանակը՝ Ֆ. Զ. Պրիւժի դէմ (5-0), անդին ՌԷալ Մատրիտ արձանագրեց իր առաջին յաղթանակը, երբ Թուրքիոյ մէջ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Կալաթասարայը՝ շնորհիւ Թոնի Զրուսի նշանակած կոլին (18-րդ):



Թոնի Զրուս

Բ. խմբակին մէջ, իր կարգին, Պալերն Միլնիկս արձանագրեց իր երրորդ յաղթանակը՝ Օլիմփիաքոսի դէմ (3-2), մինչ Թորքենհամ անխնայ եղաւ «Կարմիր Աստղ» Պելլրա-տի դէմ՝ արձանագրելով 5-0 արդիւնքով յաղթանակ մը:

Գ. խմբակին մէջ, Մանչեսթըր Սիթի եւս արձանագրեց իր երրորդ յաղթանակը՝ Աթալանթայի դէմ (5-1), մինչ Շախտիոր Տոնցց - Տիւսմօ Չարդեպ մրցումը աւարտեցաւ 2-2 հաւասարութեամբ:

Սիթիէն Ռահիմ Սթերլինկ **հեթըրիք** մը իրագործեց՝ 11 վայրկեանի ընթացքին:

Բաւական հետաքրքրական մրցումէ մը ետք, Եովէնթուս 2-1 արդիւնքով յաղթեց Լոքոմոթիւ Մոսկուային: Փաուլօ Տիպալա կերտեց Եովէի յաղթանակը՝ նշանակելով 2 կոլ:



Փաուլօ Տիպալա

Դ. խմբակին մէջ, երկրորդ մրցումին Աթլետիքօ Մատրիտ 1-0 արդիւնքով յաղթեց Պալերն Լենտըրուզին:

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրոլթի ժամանակացոյցով).

• Ե. ԽՄԲԱԿ	ԺԱՄ
Կենք - Լիվըրփուլ	22:00
Սալզպուրկ - Նախիլի	22:00
• Զ. ԽՄԲԱԿ	
Ինթեր Միլան - Պորոուսիա Տորթմունտ	22:00
Սլաւիա Փրակա - Պարսելոնա	22:00
• Ը. ԽՄԲԱԿ	
Լայփցիկ - Չենիթ Ս. Փերթըսպուրկ	19:55
Պենֆիքա - Լիոն	22:00
• Ը. ԽՄԲԱԿ	
Այաքս Ամսթերտամ - Չելսի	19:55
Լիլ - Վալենսիա	22:00

92 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԿԻՐԸ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑԱՒ ԱԹԼԵԹԻՔՕ ՊԻԼՊԱՕ - ՌԷԱԼ ՎԱՅԱՏՈԼԻՏ ՄՐՑՈՒՄԻՆ



Սպանական մամուլը երէկ անդրադարձաւ Նախորդ շաբաթավերջին տեղի ունեցած «Լա լիկա»-ի 9-րդ հանգըրուանին գծով տեղի ունեցած Աթլետիքօ Պիլպաօ - ՌԷալ Վալադոլիտ մրցումին (1-1):

Նշուեցաւ, որ 92 տարեկան Խոսէ Լուիս Իտալքօ Ռուրուլուէյն եկած է Պիլպաօ՝ ներկայ գտնուելու վերոնշեալ մրցումին:

20 տարեկան հասակին Ռուրուլուէյ գաղթած Իտալքօ 72 տարիէ ի վեր չէր եկած Պիլպաօ:

